ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԳԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1230-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 21 հունիսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Հ. Հարությունյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Վարդգես Հարությունյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Վ. Հարությունյանի՝ 01.04.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին եւ ՀՀ Ազգային ժողովի կողմից 17.06.1998թ. ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի համաձայն ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Ժառանգությունից հրաժարվելու իրավունք» վերտառությամբ 1230-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Ժառանգությունից հրաժարվելը չի կարող վերացվել կամ հետ կանչվել»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ դիմողը 02.11.2009թ. դատարան է ներկայացրել հակընդդեմ հայց, որով, ի թիվս այլնի, պահանջել է անվավեր ճանաչել 11.06.2004թ. նոտարական գրասենյակում իր կողմից ժառանգությունից հրաժարվելու մասին հայտարարությունը: Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 20.08.2010թ. վճռով գործի վարույթը դիմողի վերոնշյալ պահանջի մասով կարճվել է:

Հիշյալ վճռի դեմ սկզբնական հայցով հայցվորի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 22.10.2010թ. որոշմամբ բեկանել է Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 20.08.2010թ. վճիռը եւ այն փոփոխել. դիմողի հակընդդեմ հայցապահանջն ամբողջությամբ մերժել է: Մերժելով դիմողի հայցապահանջը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը պատճառաբանելով, որ «սույն պարագայում հակընդդեմ հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել միակողմանի գործարքը՝ 11.06.2004 թվականին իր կողմից տրված հոր ժառանգական զանգվածից հրաժարվելու հայտարարությունն այն խաբեության ազդեցության ներքո կնքված լինելու

հիմքով եւ համապատասխանաբար կիրառել անվավերության հետեւանքներ», գտել է, որ «նշված պահանջը ներկայացվել է 02.11.2009 թվականին, իսկ գործարքը կնքվել է 2004 թվականին, հետեւաբար եւ հակընդդեմ հայցվորը բաց է թողել դրա վիճարկման համար նախատեսված ժամկետները եւ հակընդդեմ հայցը՝ նշված պահանջի մասով ենթակա է մերժման, այլ ոչ թե կարճման»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի եւ 1230-րդ հոդվածի 1-ին, 3-րդ եւ 4-րդ մասերի համադրված վերլուծության շրջանակներում մեկնաբանելով վերը նշված նորմերի բովանդակությունը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Նշված նորմերի համալիր վերլուծությունից պարզ է դառնում, որ առկա է ժառանգության ընդունման 2 եղանակ՝ փաստացի տիրապետմամբ այն ընդունելու եւ համապատասխան դիմում նոտարական գրասենյակ ներկայացնելու միջոցով, եւ ժառանգության ընդունումից հրաժարվելը ենթադրում է հրաժարման պահից բացառել օրենքով նախատեսված եղանակներից որեւէ մեկով ժառանգության ընդունում»: Վերոնշյալ իրավական դիրքորոշման հիման վրա ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն արձանագրել է, որ. «...սույն պարագայում Վարդգես Հարությունյանը, 11.06.2004 թվականին օրենքով սահմանված կարգով հրաժարվելով ժառանգությունից, չէր կարող դրանից հետո հանդիսանալ եւ ճանաչվել փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ»:

ՀՀ վճռաբեկ դատարանը, վերահաստատելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.10.2010թ. որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, իր՝ 08.12.2010 թվականի որոշմամբ դիմողի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 19-րդ, 25-րդ, 31-րդ, 34-րդ եւ 42-րդ հոդվածներին: Դիմողն իր փաստարկները հիմնավորում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ, 289-291-րդ, 1225-րդ, 1226-րդ, 1227-րդ, 1230-րդ հոդվածների սեփական մեկնաբանությամբ: Մասնավորապես, ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ, 1225-րդ, 1226-րդ, 1227-րդ հոդվածների ուժով 6 ամսվա ընթացքում ժառանգն իրավունք ունի ինչպես հրաժարվելու ժառանգությունից, **այնպես էլ ժառանգությունից հրաժարվելը վերացնելու կամ հետ կանչելու,** ինչը, ըստ դիմողի, հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 3-րդ մասին: Դիմողը գտնում

է նաեւ, որ ժառանգությունից հրաժարվելը, որպես միակողմանի գործարք, ժառանգության բացման օրվանից 6 ամսվա ընթացքում պարտականություններ է ստեղծում միայն ժառանգությունից հրաժարված անձի համար, **իսկ այլ անձանց համար որեւէ պարտականություններ չի սահմանում,** եւ այդ միակողմանի գործարքը տեղի է ունենում **միայն ժառանգության բացման օրվանից 6 ամիսը լրանալուց հետո:** Վերոնշյալ փաստարկների հիման վրա դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 3-րդ մասը «արգելում է վերացնել որեւէ մեկի համար պարտականություններ չառաջացնող, այլոց իրավունքներն ու ազատությունները չխախտող միակողմանի այս գործարքը»:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկները, գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: Իր այդ դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողը, հղում կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ եւ 1232-րդ հոդվածներին, գտնում է, որ ժառանգությունից հրաժարվելը մի սուբյեկտի համար՝ իրավադադարեցնող, մյուս սուբյեկտների համար իրավաառաջացնող փաստ է, այսինքն, ժառանգի՝ ժառանգությունից հրաժարվելու փաստն այլ ժառանգների համար առաջացնում է ժառանգությունն ընդունելու իրավունք, եւ այս պարագայում օրենսգրքի վիճարկվող դրույթը մնացած ժառանգների համար երաշխավորում է որոշակի վարքագիծ դրսեւորելու հնարավորություն: Հակառակ պարագայում, ըստ պատասխանողի, կստեղծվի վիճակ, երբ ժառանգի՝ ժառանգությունից հրաժարվելուց հետո հաջորդ հերթի ժառանգները կընդունեն ժառանգությունը, որից հետո, սակայն, ժառանգությունից հրաժարվելը վերացնելը կամ հետ կանչելը կխախտի ժառանգությունն ընդունած հաջորդ հերթի ժառանգների իրավունքը: Պատասխանողը գտնում է, որ այս առումով օրենսգրքի վիճարկվող դրույթը կոչված է ապահովելու այս հարաբերություններում իրավական որոշակիության սկզբունքի իրացումը:

Ժառանգությունից հրաժարվելու ինստիտուտը դիտարկելով որպես միակողմանի գործարք եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 312 եւ 313-րդ հոդվածների վերլուծության արդյունքում հանգելով այն եզրակացությանը, որ յուրաքանչյուր դեպքում, երբ առկա են գործարքի անվավերության հանգեցնող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հիմքերը, դրա վավերականությունը կարող է վիճարկվել դատական կարգով, պատասխանողն անհիմն է համարում դիմողի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ օրենսգրքի վիճարկվող դրույթը զրկում է իրավունքի սուբյեկտին

կողմնորոշվելու, իր խախտված իրավունքները վերականգնելու, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում գործի հրապարակային քննության իրավունքից այն դեպքում, երբ ժառանգը ժառանգությունից հրաժարվել է էական նշանակություն ունեցող մոլորության, խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո:

Պատասխանողը՝ հղում կատարելով մի շարք երկրների քաղաքացիական օրենսգրքերի կոնկրետ հոդվածների, արձանագրում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթի համեմատությամբ նմանատիպ իրավակարգավորումներ են նախատեսված նաեւ այդ երկրների քաղաքացիական օրենսգրքերով:

Միաժամանակ, պատասխանողը՝ հղում կատարելով ՀՀ սահմանադրական դատարանի 24.11.2009թ. ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին եւ գտնելով, որ դիմողն օրենսգրքի վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը հիմնավորող փաստարկներ չի ներկայացրել, միջնորդում է սույն գործի վարույթը կարճել:

5. Հաշվի առնելով դիմողի դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 3-րդ մասը դիտարկել օրենսգրքի 11-րդ, 289-291-րդ, 1225-րդ, 1226-րդ, 1227-րդ հոդվածների հետ համադրության մեջ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածը վերաբերում է քաղաքացիական իրավունքները սեփական հայեցողությամբ իրականացնելու իրավական հնարավորությանը: Այս կապակցությամբ, հաշվի առնելով այլոց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության, հասարակական հարաբերությունների կայունության ապահովման անհրաժեշտությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավունքների իրականացման հայեցողությունը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ խաթարվի այլոց իրավունքների եւ ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի էությունը, վտանգի տակ դրվի հասարակական հարաբերությունների կայունությունը: Հետեւաբար՝ իրավունքների իրականացման հայեցողությունը չի ենթադրում իրավունքների չկարգավորված, անկանոն իրականացում: Այն ենթադրում է տվյալ իրավունքն իրականացնելու կամ չիրականացնելու իրավական հնարավորությունների միջեւ ընտրություն կատարելու իրավունք, որի իրականացումը կարող է տեղի ունենալ բացառապես օրենքով սահմանված կարգի շրջանակներում: Ընդհակառակը, իրավունքների՝ օրենքով սահմանված կարգից դուրս ցանկա-

ցած իրականացման հնարավորություն կխաթարի այլոց իրավունքների եւ ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի էությունը՝ միաժամանակ վտանգի տակ դնելով հասարակական հարաբերությունների կայունությունը: Այդ է պատճառը, որ, առաջնորդվելով վերը նշված իրավաչափ նպատակներով, այն է՝ այլոց իրավունքների եւ ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի երաշխավորումը, հասարակական հարաբերությունների կայունության ապահովումը, օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում կատարել է բացառություն՝ թույլատրելով սուբյեկտիվ իրավունքներից հրաժարվելու հետեւանքով օրենքով նախատեսված դեպքերում այդ իրավունքների **դադարում:** Տվյալ դեպքում, ի թիվս այլնի, որպես վերը նշված դեպք է հանդիսանում օրենսգրքի վիճարկվող նորմով սահմանված դեպքը՝ ժառանգությունից հրաժարվելը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում ժառանգության ընդունումը կամ ժառանգությունից հրաժարվելն առնչվում են մյուս ժառանգների կամ ժառանգություն ստանալու իրավունքի օրինական ակնկալիք ունեցող այլ անձանց իրավունքներին եւ պարտականություններին, հետեւաբար, վերը նշված իրավաչափ նպատակներից ելնելով, օրենսդիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասին համահունչ, օրենսգրքի 1230-րդ հոդվածի 3-րդ մասում կատարել է բացառություն՝ արգելելով ժառանգությունից հրաժարվելը վերացնելու կամ հետ կանչելու հնարավորությունը՝ միաժամանակ **դադարած** համարելով տվյալ անձի՝ ժառանգություն ստանալու սուբյեկտիվ իրավունքը:

Նշված տրամաբանության վրա են հիմնված նաեւ օրենսգրքի 1225-րդ հոդվածի 2-րդ մասը եւ 1230-րդ հոդվածի 4-րդ մասը, որոնք արգելում են համապատասխանաբար՝ ժառանգության ընդունումը եւ ժառանգությունից հրաժարվելը վերապահումներով կամ պայմանով, կամ օրենսգրքի 1227-րդ հոդվածը, որը կարգավորում է այն ժառանգների ժառանգության իրավունքի իրականացման հետ կապված հարաբերությունները, որոնք ծագում են համապատասխանաբար՝ ժառանգությունից այլ ժառանգի հրաժարման կամ այլ ժառանգի կողմից ժառանգությունը չընդունելու դեպքերում: Նշված տրամաբանության վրա է հիմնված նաեւ օրենսգրքի 291-րդ հոդվածը, որը, որպես բացառություն, թույլատրում է, որ **օրենքով նախատեսված դեպքերում** միակողմ գործարքներն այլ անձանց համար եւս պարտականություններ ստեղծեն: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում, ի թիվս այլնի, որպես վերը նշված դեպք է հանդիսանում նաեւ օրենսգրքի վիճարկվող նորմով սահմանված դեպքը՝ ժառանգությունից հրաժարվելը, ինչը համա-

պատասխան պարտականություններ է ստեղծում նաեւ մյուս ժառանգների կամ ժառանգություն ստանալու իրավունքի օրինական ակնկալիք ունեցող այլ անձանց համար, քանի որ առնչվում է վերջիններիս ժառանգության սուբյեկտիվ իրավունքին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանն անհիմն է համարում դիմողի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ, 289-291-րդ, 1225-րդ, 1226-րդ, 1227-րդ, 1230-րդ հոդվածների վերաբերյալ տրված մեկնաբանությունները, եւ գտնում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ վիճարկվող նորմի սահմանադրականությամբ:

6. Անդրադառնալով դիմողի այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ օրենսգրքի վիճարկվող դրույթը զրկում է իրավունքի սուբյեկտին վերականգնելու իր խախտված իրավունքներն այն դեպքում, երբ ժառանգը ժառանգությունից հրաժարվել է էական նշանակություն ունեցող մոլորության, խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո՝ ՀՀ օրենսդրության, մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 312, 313 եւ 317-րդ հոդվածների ուսումնասիրության արդյունքներով՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրությունը չի բացառել էական նշանակություն ունեցող մոլորության, խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի՝ մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ կամ ծանր հանգամանքների բերումով գործարքների կնքման դեպքերի հնարավորությունը: Տվյալ դեպքերի համար նախատեսելով գործարքն անվավեր ճանաչելու ինստիտուտ՝ ՀՀ օրենսդրությունը վերը նշված դեպքերում երաշխավորում է գործարքի տվյալ կողմի իրավունքների, ներառյալ՝ ժառանգության իրավունքի իրականացումը եւ խախտված իրավունքների վերականգնումը: Հետեւաբար, սահմանադրական դատարանն այս խնդրում իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակում չի արձանագրում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

21 հունիսի 2011 թվականի
ՍԴՈ-980